

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ «ՀԱՐԱԼԵՋՆԵՐՈՒՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆԸ»
ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐԸ

Ա. Ռ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

Նահանջի գրականության սկզբնավորողն ու լավագույն արտահայտիչը մեր իրականության մեջ ֆրանսաճայ մեծ գրող Շահան Շահնուրն է (1903—1974)։ Նա գրականություն մուտք գործեց 1929-ին՝ «Նահանջ առանց երգի» վեպով, որ հնչեց հորե ահազանգ ու զգոնության կոչ՝ ի լուր սփյուռքահայության գլխավերևում թևածել սկսող սպիտակ ջարդի դիմագրավման։ Նա խիստ սև գույներով պատկերեց «գիտակից» հայ երիտասարդության տեղատվությունը քաղքենի արևմուտքի առաջ, նրանց ընկրկումը առաջին իսկ հանդիպած խոշրնդոտներից և փաստորեն ժողովրդի դատին հանձնեց ազգը հեշտությամբ ուրացողներին։

Հոռետեսական իր նպատակամետ գնահատումներով Շահնուրը սթափության էր կոչում սփյուռքին, նշելով, որ մեղքերից ծանրագույնը դարավոր արյունն իբրև փրկագին վճարելն էր՝ հանուն դատարկ ու սին մի գույի, որից այն կողմ սկսվում է մոռացությունը։ Այս առումով «Նահանջից» հետո որպես գեղարվեստական արձակի մեկ ուրիշ ցայտուն նմուշ առանձնանում է «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածաշարը (1932 թ.)։

Սկզբնապես «Հարալեզներուն դավաճանությունը» շարքը ընդգրկել է յոթ պատմվածք, որոնցից վերջինի վերնագիրն էլ դարձել է շարքի անվանումը։ Սակայն 1932 թ. երևանյան հրատարակչության հեղինակները ավելացրել են ևս երեք գործ «Բաց տոմար» ժողովածուից, որոնք թեմատիկ առումով ոչ մի կապ չունեն խորագրի ու նաև ընդհանուր շարքի հետ։ Այդ իսկ պատճառով շնք անդրադառնա դրանց։

«Հարալեզներուն դավաճանությունը» շարքի՝ որպես գեղարվեստական մեթոդական վերլուծությունը կատարելիս, մեր կարծիքով շատ կարևոր է առանձնապես՝ որոշել յուրաքանչյուր պատմվածքի միտումն ու հետապնդած նպատակը։ Այս չափանիշով առաջնորդվելիս՝ նկատելի է դառնում, որ առաջին երեք պատմվածքները («Առավոտյան շեփոր», «Հոսանքին եզրը», «Մանուկ մը տարեցներու մեջ») կարծես դարձյալ շեղվում են ընդհանուր խորագրից։ Սակայն սա ոչ թե շեղում է, այլ գրողի կողմից կատարված դասակարգում։ Ուշագիշտ քննելիս՝ պարզ է դառնում, որ պատմվածքները դասավորված են թեման արժարժեքի տեսակետից հետզհետե աճող ուժգնությամբ։

Առաջին երեք՝ փոքր-ինչ զավեղտական պատմվածքների նյութը վերցված է արևմտահայ, ավելի որոշակի՝ պոլսահայ կյանքից։ Հաջորդ պատմվածքով արդեն՝ «Դերձակ մը, իր երկու հյուրերը և զանազան դեպքեր», շրջադարձ է կատարվում դեպի սփյուռքահայության կյանք. փոխված է միջավայրը, խաթարված է հերոսների անդորրը։ Շարքը ավարտում է «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածքը՝ որպես նահանջի մի նոր ու հզոր ահազանգ։

Պոլսահայությանը նվիրված կյանքի դրվագներից առավել հետաքրքիրն ու արժեքավորը «Առավոտյան շեփոր» պատմվածքն է։ Չկայացած սիրո մի փոքրիկ պատմություն է սա, միաժամանակ և կյանքի առաջադրած մի փորձություն, որով պիտի քննություն բռնեն հերոսները, հաստատեն կամ ժլատեն մարդ լինելու դժվարին կոչումը։

Խորհրդանշների միջոցով Շահնուրը լրացնում և ընդգծում է իր հերոսների վարքագիծը։ Եվ արդեն պատմվածքի վերջում հասկանալի է դառ-

նում, թե ինչու էր երդում-պատառ լինում, երբ դեռ մանկամիտ էր և չէր ճանաչել օրվա հոգսերը. «...Տղայական բաները կստորագծե, կպնդե ըսածին վրա, երդում-պատառ կըլլա, երկինք-գետին արձագանք տալով»¹:

Միանգամայն պարզ է, որ այս «մանկամիտ» շեփորը գլխավոր հերոսի՝ կյանքում իր ուղին հեշտ փոնոդ, իր արածի համար անպատասխանատու թեթևաբարո Ավետիսի վարքն է բնութագրում: Այդպիսիները, բնականաբար, իրենց ծանծաղ խելքով երբեք չեն կարող հասկանալ ու գնահատել դիմացինի սրտաբացությունը, միայն վերջ մարդուն նվիրվելու (տվյալ դեպքում՝ անարևոտ մարդուն) հազվագյուտ ունակությունը: Այդ ամենը նրանց աչքում պարզապես թեթևամտություն է: Եվ զողեցող հեռանալու, լքելու պահին Ավետիսը պիտի փրկստփայի, թե իր համար դժվար է բաժանումը, քանի որ. «...անգամ մը սիրտ ես տվեր: Ատեն մը, հոգ չէ, թե կարճ, հրճվեք ես՝ տեսնելով այդ աչքերը... Մարդ ամոթ կզգա ինքն իր առջև ու մանավանդ կմեղքնա դիմացինն ալ, Դիմացինն ալ՝ ոչինչ պիտի հասկնա այս բոլորեն»²:

Ի՞նչ է պահանջում երիտասարդը՝ չամբաստանել իրեն, չմեղադրել: Սակայն Աղավսին չի էլ մտածում այդ մասին, այլ միայն տոչորվում է անցյալի հուշերից: Ավետիսի կարծում է, որ էլ երբեք չի հանդիպի իր՝ Ավոյի պես լավ տղայի. «Կարելի չէ, որ անոր պես հատ մըն ալ գտնեմ: Դուն չես դիտեր, թե որքան շատ իրարու կնամանեինք»³:

Այս պատմությունը բացահայտում է ոչ միայն սիրող զույգին, այլ նաև նրանց շրջապատի մարդկանց: Պարզվում է, որ հաճախ լուսկյաց ու անմարդամոտ թվացող մարդիկ հարկ եղած դեպքում շատ ավելի լայնասիրտ ու բարի են, քան թվում է արտաքինից: Ահավասիկ դեղագործ Արթաքի էֆենտին՝ Աղավսիի մորաքրոջ ամուսինը: Նա չոր ու խստահայաց մարդ է, բոլորի կարծիքով՝ ամենասովորական մի խանութպան: Բայց արի ու տես, որ միայն այս խանութպանն է հասկանում, թե ինչ փոթորիկ է Աղավսիի հոգում, միայն նա է տեսնում, թե ինչ ծանր է նստում աղջկան իր շինծու անտարբերությունը:

Եվ նորից գտնված սիմվոլ. դեղատան ցուցափեղկերում դեմ-դիմաց դըրված են երկու ջրագնդեր՝ դեղին և կապույտ: Ամեն օր արևի շողը լուսավորում է դեղինը, իսկ կապույտը մնում է ստվերում: Մտորում է դեղագործը, թե արդյոք ի՞նչ բոց է պահված կապույտի մեջ, «ր՛նչ ճաճանչում պիտի ունենա կապույտն ալ, եթե վառի»: Եվ մի՞թե ինքն էլ նման չէ այդ ստվերում մնացած ջրագնդին՝ ինքն իր մեջ բանտարկված և դատապարտված մշտական մենախոսության: Ճառագայթի նման իրենց ալիքված պատահական անակնկալը լուսավորեց, բացահայտեց անլուրջ թվացող աղջկան, լուրջ թվացող տղային ու նաև սովորական խանութպան հռչակված դեղագործին: Սակայն քանի՜-քանի՜ մարդիկ դեռ ստվերի մեջ են և չեն ճաճանչել իրենց իսկական լույսով: Վճռված է. անպայման պետք է փոխել ջրագնդերի տեղերը: Այդպիսով գուցե թե կպակասի «ցկյանս բանտարկյալներու թիվը»⁴:

«Հոսանքին եզրը» պատմվածքը, ի տարբերություն նախորդի, շունի գործողությունների բազմաշերտություն և հոգեբանական խոր վերլուծումներ: Սա մի դրվագ է պոլսահայ հատուկ կարգի մարդկանց կյանքի, որոնց վարքի կարելի է բնութագրել որպես անբարո ցինիզմ: Այս պատմվածքի բոլոր երեք հերոսները կորցրել են չափի զգացումը և պատկերացում շունեն, թե ինչ ասել է տարրական հարգանք մարդու հանդեպ:

Ավանդական եռանկյունին է՝ թուլամորթ ամուսին, լպիռ կին և անպատկառ սիրեկան ֆիզուրներով: Ժամանակավոր անտեղյակությունը միմ-

1 Շ. Շ ա հ ն ու Ր, Երկեր, հ. 1, Երևան, 1982, էջ 166:

2 Նույն տեղում, էջ 188:

3 Նույն տեղում, էջ 195:

4 Նույն տեղում, էջ 197:

յանց «պաշտոններին» մասին շուտով վերանում է, սակայն հետաքրքիր է, որ գրանից ոչ մեկը դուլզն-ինչ գոնե անհարմարութեան զգացում չի ապրում:

Այստեղ թերևս ամենազգլխին Անժելը կամ Վահրամը չեն, որոնք այլևս վերադարձի ուղի շունեն դեպի բնականոն կյանք: Ամենաարգահատելին դառնում է Անժելի անողնաշար ամուսինը, որ «եկեղեցին եղած ատենը պնակ պտտացուցած է: Հայտնի է, թե այժմ կինն է, որ զինքն կպտտցնեն»⁵:

Այն բանից հետո էլ, երբ իրեն բացահայտորեն անպատվում են՝ Վահրամի կենվոր դառնալու նպատակը պարզելով, Գարեգինը, հանուն խմիչքի, դարձյալ չի հեռանում սեղանից և անպատվութիւնը ճաշակում է մինչև վերջ: Անկումը լիակատար է:

«Մանուկ մը տարեցներու մեջ» պատմվածքը ավելի քան զավեշտական է: Այստեղ ամենադճախահատելին Կ. Պոլսի Սկյուտար թաղամասի կենցաղային սովորութիւնների գեղեցիկ դրվագումն է: Շահնուրը գտնում, հայտնադործում է կենցաղային մանրամասները. կարծես վրձնված լինեն կեսօրվա տապի նկարագրութիւնը, գոմեշների ծուլլ ընթացքը:

Ավարտը խիստ ծիծաղաշարժ է. երիտասարդ աղջիկը, որ փորձում էր իր փոքրիկ խորամանկութեամբ հաշտեցնել զժողոված հարևաններին, ինքն է ընկնում անկ վիճակի մեջ: Պարզվում է, հենց նա է «սիրելի» հարևաններին միմյանց հետ կռիւնցողը: Սակայն երանի ամեն վերջ այսպիսին լիներ, այսինքն՝ իր մեջ ունենար ծիծաղի բռնկումներ:

Մյուս շորս պատմվածքները՝ նվիրված սփյուռքահայութեան կյանքին ու կենցաղին, բացառապէս թախծապարուր ստեղծագործութիւններ են:

«Իերձակ մը...» ստեղծագործութիւնը պատմում է Կ. Պոլսից Փարիզ տեղափոխվել ցանկացող Տազես աղայի ողբերգական պատմութիւնը: Տեղափոխման պատճառների մասին լռում է հեղինակը, չի խոսում ոչ Իզմիրի դեպքերի, ոչ էլ հայութեան հանդեպ 20-ականներին կազմակերպված նոր հալածանքների շուրջ: Սակայն լռութիւնն ավելի պերճախոս է. լավ պայմաններից չէ, որ պիտի տեղահան լինեին մարդիկ, այս անգամ՝ կամովին:

Տազես աղան դստեր հետ միասին, մեծ պարտք անելով, եկել է Փարիզ՝ պարտքի դիմաց պատանդ թողնելով քրոջն ու զարմիկին: Պատանդ է թողել, սակայն հպարտութիւնը չի ներում խոստովանել իսկութիւնը: Ուրեմն՝ ինչ էլ լինի, պիտի կարողանա աշխատանք գտնել, որպեսզի կարողանա բերել տա հարազատներին:

Փարիզ. պերճանքի ու շուալ գեղեցկութիւնների քաղաք, արվեստների հովանավոր քաղաք, ...անառակութիւնների, զեխութիւնների քաղաք: Տազես աղան, ցավոք, անմասն է մնում Փարիզի բարեմասնութիւններից: Ժամանման առաջին իսկ օրից իրար հետեից ականատես է դառնում տհաճ, նահապետական հայ մարդու համար անհանդուրժելի տեսարանների:

Հայ մարդն իր ծննդավայրում մանկուց սովորել է հարգել իրենից մեծին, ականածանք ունենալ շրջապատի նկատմամբ ու նաև՝ ակնկալել այդ հարգանքը նույն շրջապատից: Բայց այստեղ՝ Փարիզում, ոչինչ իր տեղում չէ. վարորդը դստեր ներկայութեամբ անպատկառ երգ է երգում, պանդոկապետը «իրեն թույլ է տալիս» վայրահաշել գիշերը լույսը վառելու համար, ճաշարանի ծառան կերակուրը նետում է, որպէս շանը կնետեր, վերջապէս ամենացնցողը՝ իրեն, պատկառելի մարդուն, առաջնորդում են մի սենյակ, որն ամեն օր «մի ժամով» վարձում է ինչ-որ անբարո աղջիկ: Եվ սա էլ բավական չէ, հայրենակից երիտասարդը ուզում է նյութ տալ իր ծիծաղելի վիճակի մասին: Ո՛չ, տանելի չէ փարիզյան կյանքը. «Դուք կրնաք այս բոլորին հանդուրժել, բայց ինք՝ Տազես չէր կրնար բնավ, մանավանդ, որ լեզվի չգութիւն պատճառով պիտի ստիպվեր լռել միշտ ու տանել: Ոչ, չէր կրնար:

քանի որ ինք մարդ է և կրնախընտրել ասարի Պոլիս, հոգ չէ, թե շոր հացով, քան թե ուրանալ ինքզինքը»⁶:

Ի վերջում է՝ վճիռը վերջնական է, հետ կանգնելու տեղ չկա, սակայն որքան էլ դժվար է Փարիզին համակերպվելը, ընթերցողին հասկանալի է, որ Կ. Պոլիս վերադառնալը ուղղակի անհնարին է: Ի՞նչ է մնում անել խեղճ մարդուն՝ պարզապես միայլ ինքնությունը կորցնելու ցավից: Ծրգում է Տագես աղան իր «Տեր ողորմեան»՝ հուզումից երերալով ու դողդողալով. «Վարպետը չէր լար իր անկումին վրա:—«Տեր ողորմեան է», որ լալագին է: Վարպետը չէր աղաչել կյանքին, երիտասարդներուն,—«Տեր ողորմեան» է, որ պաղատադին է: Խոշոր արցունքներ կային, բայց հինցած կոկորդն է հանցավոր»⁷: Ահա շահնուրյան ևս մի գլուտ. հաստատել՝ ժխտելով: Տագես աղան լալիս ու պաղատում է ոչ միայն իր կորցրածի, այլ ավելի շատ երիտասարդության կորցնելիքի համար: Ինքը կապրի՝ մերժելով ու վարկարեկելով միջավայրի անառողջ կյանքը, բայց երիտասարդությունը՝ հանձինս անպատկառ երգեր երգող «էջու կտոր հայ կառավարի մը»՝ շրջապատին լիով ընտելացած իր նախկին աշակերտ Տիրանի ու նաև նույն բախտին ենթակա իր դասեր, արգեն համակերպվում է եղածի հետ: Սա է ամենացավալին:

Ֆիզիկական բնաջնջումից մազապուրծ գաղթահայության քիչ մասին բաժին չընկավ ակամա զոհի ճակատագիրը: Իսկ այդ ակամայի գիտակցությունն արգեն մեծ բարդությունների տեղիք է տալիս: Կամովին ուժացման դիմողը հազիվ թե ցավի իր ու նաև իր զավակների արյան կորստի համար, որովհետև չունի ազգային ինքնություն ասվածի ըմբռնումը: Իսկ հակառակ եզրում գտնվողների համար դա ամենամեծ ողբերգությունն է: Վիճակը հատկապես բարդանում է, երբ անհնալ է դառնում հոսանքին դեմ գնալը և ելք որոնելը: Նման դեպքերում արգեն գաղթահայը դատապարտվում է «Պճեղ մը անուշ սիրտ» պատմվածքի հերոսի բռնած ուղուն:

Նախապես ասենք, որ դասական պատմվածքի շարքը դասվող այս գողտրիկ ստեղծագործությունը մի իսկական ձոն է՝ նվիրված հայ կնոջը, հայ մամիկին ու թերևս իր տեսակի մեջ եզակի է մեր դրականության անբաստանում:

Առաջին իսկ սողներից ընթերցողին է պատկերանում Եպրաքս հանրմի՝ հայ մոր, անշափ կենդանի, իսկապես ամբողջական կերպարը: Անմիջապես ճանաչում ես հայ մամիկին՝ գիրուկ, փոքր-մոքր մարմին, հաճելի շատախոսություն, անշափ հոգատարություն, սև հոնքեր, վերին սև շրթունք ու նաև հայի սև ճակատագիր: Ամեն հայ մարդ էլ նրան է հարազատ, թեկուզ տրամվայի անկյունում նստած դժգույն երիտասարդը, որի թխությունն ու ձեռքի հայերեն լրագիրը մատնում են իր հայ լինելը. «Հայ ըլլալդ քիթեղ-բերնեղ կվազե կոր, հեմեն ըսի, քի մեր արյունեն ես...»⁸:

Եվ ինչպես վաղեմի բարեկամի՝ Եպրաքս հանրմը սկսում է պատմել իր մանր-մունր հոգսերը, դառնացած գանգատվում, որ հայը օտար է Եվրոպայում և շատերի անթաքույց փափագն է՝ «ժամ առաջ հայ ընտանիքին մեկնումը տեսնել (ընդգծումը մերն է — Ա. Դ.)»⁹:

Կնոջ դառնացածությունն ու տագնապը ավելի է մեծանում, երբ հանկարծ նկատում է, որ ազգակից երիտասարդը անառողջ տեսք ունի: Ի՞նչ ցավ ունի հարազատներին հեռվում թողած հայ տղան, որ ճիշտ իր որդու տարիքին է: Եպրաքս հանրմը թող տրորվի այս նոր հոգսերի տակ, իսկ նա՝ այդ մութ տղան, որոշել է... ինքնասպան լինել: «Պատճառները բոլորովին անձնական են: Որոշումս անդրգվելի է: Անդրգվելի: Չեմ ուզեր ասարի: Չեմ կրնար»¹⁰:

⁶ Նույն տեղում, էջ 245:

⁷ Նույն տեղում, էջ 254:

⁸ Նույն տեղում, էջ 278:

⁹ Նույն տեղում, էջ 279:

¹⁰ Նույն տեղում, էջ 283:

Ինչո՞ւ չի ուզում և հատկապես ինչո՞ւ չի կարող. պատճառը հուշող ոչ մի ակնարկ չկա: Միայն Եպրաքսե հանրմի մի քանի ցիրուցան արտահայտություններից կարելի է կարծել, որ երևի աշխատանք չունի. «Ասանկ օրով դուն ինչո՞ւ չես աշխատեր»¹¹: Հնարավոր է նաև, որ լուրջ հիվանդություն ունենար. «Երեսդ կարմիր չէ մնացեր. ինչպես մեկ անգամին շտեմա...»¹²: Զի բացառվում նաև, որ մնացած լինի առանց փող. «Փարա չունի՞ս, սուտ ևս ...ցուցուր նայիմ սա փարադ»¹³:

Հայ մոր մտատանջություններից զգացված՝ տղան մտորում է. «Աշխարհի վրա դեռ մարդ կա եղբեր»¹⁴: Եվ միայն այս մի հատիկ նախադասությունը բավական է՝ պատկերացնելու նրա ընկճվածությունն ու հիասթափության աստիճանը շրջապատից: Թող որ որոշակի ոչ մի բառ չկա ինքնասպանության մղող դրդապատճառի մասին, բայց դա տվյալ դեպքում կարևոր էլ չէ: Բավական է հիշել, որ այս պատմվածքը գեղեցկված է «Դերձակ մը, իր 2 հյուրերը և զանազան դեպքեր» ստեղծագործությունից հետո, ինչը նշանակում է, թե գնալով պիտի թանձրանան գույները. գաղթաշար ավելի անելանելի կացության մեջ պիտի բնկնի:

Այստեղ կա հիշատակման արժանի ևս մի փաստ. պանդոկատի՛ն գրած Լրկտողում հերոսն ասում է. «Փարիզի մեջ ոչ ոք ունիմ: Մարդ չունիմ: Ոչ ոքի սու մը պարտք ունիմ»¹⁵: Կյանքի դաժան ճամփաներին մեն-մենակ մնացած մարդը դնում է մեռնելու՝ շմեղանչելով ոչ մի բանի ու ոչ մեկի դեմ: Ոչ մի սու-ն այստեղ միայն փողի համար չէ, որ շեշտում է երիտասարդը: Նա գնում է մեռնելու՝ խիղճը հանգիստ, ապահով, որ հետևից չեն անի-ծելու: Բայց մի՞թե պիտի գնահատվի տղայի ազնվությունը կամ ո՞վ է ափսոսացողը. «Տղա մը պակաս է եղբր... որո՞ւն հողն է... հաշիվ բռնողն ո՞վ է... Աս շափ մարդ ջարդեցին, աս շափ անմեղի արյուն մտան... ո՞վ որի... բարե հրաշք մը ըլլար և սա տղան գտնեին, հրաշք մը ըլլար՝ սա տղան փրկեին...»¹⁶:

Աղոթքի, պաղատանքի պես է հնչում հայ մոր հանդիմանանքը, հետդարձի կանչը: Ու թերևս ավելի շատ խղճում ես Եպրաքսե հանրմին, որովհետև իր տեսածներն ու քաղածները «աստված քիչ է համարում» և օր ծերության սգալ է տալիս նորայրի վիշտը: Նա, նորայր-Ռոպերը, հազարավոր ուրիշներ այդպես էլ շիվար ու մոլոր կմնան ուրիշի դռներին, օտար քաղաքներում, կմնան չհասկացված ու անըմբռնելի՝ իրենց թախիծով, աչքերում լճացած տխրությամբ:

Շարքը շարունակող «Զաթոսթե» պատմվածքը նույնպես նվիրված է սփյուռքահայ մի բեկորի դառը ճակատագրի: Սակայն այստեղ ավելի, քան նախորդ որևէ պատմվածքում, մեծանում է խորհրդանշական միջավայրի պայմանականությունը: Անշափ հետաքրքիր է պահի գեղարվեստական մտահղացումը: Թվում է՝ գաղթաշարության ու հայրենիքի կապի մասին ակնարկվում է լոկ անհրաժեշտության բերումով, հենց այնպես, իբր թեթևացնելու պատմվածքի հերոսուհուն հասցված վիրավորանքը. սրտնեղության պահին Շահնուրի հերոսը առանց այդ էլ թշվառ մի հայուհու երեսին գոռացել էր, թե ինքն էլ չի հավատում նրա առողջացած լինելուն: (Բոլորովին առողջ Պեթրիսը «զգուշության համար» արտաքսված էր իր ընտանիքից և անտեղի տառապում էր առողջարաններում):

11 Նույն տեղում, էջ 281:

12 Նույն տեղում, էջ 281:

13 Նույն տեղում:

14 Նույն տեղում, էջ 282:

15 Նույն տեղում, էջ 283:

16 Նույն տեղում, էջ 288:

Սակայն անմիջապես հաջորդում է զղշումը, և հերոսը զոչում է գյուղ անելու պես.

«Եթե առողջացած ըլլալիր, դուն, գաղթահայություն, մենք քեզ տուն կկանչեինք, Հայաստանի դռները կբանայինք քու առջև, Բայց դուն հիվանդ ես»¹⁷.

Սրանով ազգասեր գրողը շեղտում է, թե բավական է, որքան սկյուռքահայությունը թափառեց ու հյուծվեց գաղթի ճամփաներին, ժամն է, որ հայրենիքը տուն կանչի զավակներին, թեկուզ սրապից ոմանք լինեն մոլորյալ և իրենց մեջ կրեն տարբեր գաղափարի «մանրէներ»։ Սա դեռևս 1932 թվականն է։

Վերջին՝ «Հարալեզներուն դավաճանությունը» պատմվածքը. շարքի ամենալարված, ամենադրամատիկ էջն է՝ որպես պաթետիկ մի բարձրակետ ու եզրափակում։ Այս ստեղծագործության մեջ խտանում են գրողի բոլոր տեսակի մտածումները հայության հարցի շուրջ, նրա խիզախումները, տարակուսանքները, նաև՝ ընկրկումներն ու հիասթափությունները։

Կառուցվածքը հետևյալն է՝ պատմվածք պատմվածքի մեջ։ Ներակա պատմվածքը, այսինքն՝ ընդհանուրի մեջ ընդգրկվողը, գրված է սարսափ-պատմվածքի ժանրին հատուկ վախ ազդող գեղեցկությամբ (ինչը բնորոշ է, օրինակ, էդգար Պոյին)։ Մթնոլորտն այնպիսին է, որ երբեմն շնչակտուր է անում ընթերցողին՝ անընդհատ սպասման ու լավի ակնկալիքի մեջ պահելով նրան։ Հերոսների անիրական ու կես-իրական գոյությունը, թեթև բուդդիզմի տարրերի ընդգրկումը ստեղծում են այն իրական-վերացական միջավայրը, որ այսօր հորոքորվում է ռեալիստական միջևանում։ Եվ որքան նրբություն կա գրական հնարանքի մեջ, ոչ մի ճիգ, ոչ մի արհեստականություն։ Ջնջված է իրականի ու անիրականի սահմանը. չգիտես՝ կարծեցյալն է խառնվում իրականին, թե իրականն է գործում կարծեցյալի մեջ։

Անդրաշխարհային ձայնը խոսում է՝ բոլորովին անծանոթ անուններ կոչելով, բայց դա չի խանգարում կռահելու, որ նյութը հայոց եղբրական պատմությունն է. «Երեցները ջարդեցին մեզ հազարներով, միլիոններով, անասուններու պես և ավելի խժոժությամբ»¹⁸։

Մինչև Երկրորդ համաշխարհայինը աշխարհը չի իմացել ուրիշ ցեղասպանության դեպք, բացի հայերի սպանդից։ Մյուս ցեղասպանությունները, բնականաբար, Շահնուրը չէր կարող վաղօրոք կանխատեսել, որ նրանց օրինակով մատնանշեր հայոց եղբունը։ Ավելորդ քննության կարիք չկա։ Եվ խոսում է տողերի շարունակությունը. «Աս սպանդին չկրցավ դեմ դնել ոչ մեկը այն գաղափարներին, որոնց նվիրված էինք աղետեն առաջ։ Ամեն ինչ, որ գեղեցիկ էր, բարձր էր, դատապարտվեցավ լուսթյան, անշարժության»¹⁹։

Այո՛, հայի մարդասիրությունն ու գեղեցիկի հանդեպ ակնածանքը միայն արագացրել են նրա կործանումը թուրքական բռնապետության մեջ։ Եվ գուցե հենց այդ բարոյությամբ շաղախված քաղաքակրթությունն է, որ հոռետես կացության մեջ է դնում մարդուն, հուսահատեցնում շարի դեմ պայքարի մեջ։

Փորձենք մեկնաբանել խորհրդանշանների դասավորությունը։

Հերոսը՝ Համբարձում պատանին, առաջին հոգու հայտնվելու միջոցին գտնվում է Կ. Պոլսում, այսինքն՝ դեռևս արևելքի է։ Հետո նրան տեսնում ենք ծայր արևմուտքում, այնտեղ, ուր նետել է շար բախտը։ Պոլսում գիշեր է։ Բուքը պողպատե գամերով սանրում է մահաշունչ ծառուղին, ուր նոճիի բնին ապավինած՝ դողում է մի լքված տղա (նոճին մահվան սիմվոլն է)։ Տղան ճիգ է անում խաղաղության պատրանք ստեղծել, սակայն աչքերը համառում են չտեսնելու այդ պարտադրվող նկարները։ Թանձրանում է սար-

17 Նույն տեղում, էջ 273։

18 Նույն տեղում, էջ 295։

19 Նույն տեղում։

սափը, երբ կարծես հողի տակից լսվում է մի մեռելային ձայն: Ձայնը կոչում է նրան (Ատնանին) հուսալու, թեկուզև անհուսալության միջից, քասի որ լույսը ծնվում է լուսավոր, թե մթին ճանքային, քրքիջի մը մեջեն, թե հեկեկանքի»²⁰:

Թեև կործանվել են ազգովին՝ աներևակայելի ջախջախումով, և Ատնանը մեռնել է փափագում, բայց չպիտի մեռնի, նա պիտի հուսա: Եվ հուսալով է, որ պիտի կանգնի այն ճամփի վրա, որ թեև ոչ մի տեղ չի տանում, բայց երեք անգամ բարձրանում է վեր, այն պատուհանի առաջ, որ թեև փոքր է ու գոց, բայց երկինք է նայում և ոչ թե մթին բանտին: Չի կարելի մահ ցանկալ, որովհետև այդպիսի մարդը ոչ կենդանի է և ոչ էլ մեռյալ: Մի ուրիշ գրող՝ Փ. Միքայելյանը, կմտորի այսպես. «Բոլոր մութ գիրքերուն, բոլոր տխուր խոսքերուն, նույնիսկ ցավերուն հակառակ կ'արժե ապրիլ»²¹:

Ահա և արևմուտքը: Այստեղ կոտրած անիվ կա և ձկան ուռկան: Այսինքն՝ խափանվել է երթի ընթացքը, ընկել են ուռկանի մեջ և թպրտում են ափ նետված ձկան պես: Բայց պետք չէ մանրանալ կյանքի դաժան հարվածներից և կորցնել սիրելու հատկությունը. «Սիրե գործելու և հառաջանալու համար, սիրե սիրելու համար»²²,—նորից ոգեկոչում է օտար ձայնը: Այստեղ նաև փոթորիկ է սպասվում: Սակայն «փոթորիկները միշտ գետնաքարշ են»²³, Պետք է վեր ելնել փոթորիկից, բարձրանալ սև երկնքից և հասնել զուլալ կապույտին: Միայն այնտեղ կարող է վառվել հույսի լապտերը: Եվ այնուամենայնիվ, ցավալի է, որ թեև փոթորիկները միշտ ցրվում են, բայց նաև քանդում ու փոխում են: Սակայն, ինչ էլ որ լինի, «Անհրաժեշտ չէ և միշտ կարելի չէ մեծ ըլլալ, բայց միշտ պետք է և կարելի է սիրել»²⁴:

ՀՈՒՑՍ և ՍԵՐ: Հայ երիտասարդը ուզում է ոչ ուրիշների, այլ իր աստվածների բերանից լսել մեծագույն պատգամը: Նա էլ չի հավատում շատ դիմելուց խլացած ու անտարբեր հրեա աստծուն և կոչում է մեր հեթանոս աստվածներին: Միայն մի շող, և հայությունը կրկին կհառնի մոխիրներից: «Որպես թե համբուրված ըլլալինք ամենագոր հարալեզներեն»²⁵, Բայց, ավաղ, հեթանոս աստվածները մեռել են. «Իմ անունս Անահիտ չէ: Դուն զիս ուրիշին հետ կշփոթես»²⁶:

Հարալեզները դավաճանում են: Արնաքամ, վերքերը բաց հայությունը մնում է առանց դարմանողի և արդեն ոչ կենդանի է և ոչ մեռած: Համբարձում պատանին կամ նույն ցիրուցան հայությունը սկսում է տառապել մըղ-ձավանջերի մեջ. արդյոք կենդանի, թե՞ մեռած է ինքը:

Հեքիաթ-պատմվածքը վերլուծելիս՝ հեղինակը խորհում է, որ «ստած էր իր մեջ՝ Հայը անսահմանորեն տառապակոծ ցույց տալով»²⁷: Քանի որ նա՝ հայությունը, դիմանում է ցավին, ուրեմն, երևի, հավաքական ցավերը «անսահման չեն կրնար ըլլալ կամ... ամենեն երկար տևող ցավերը ամենեն անտանելի չեն...»²⁸:

Հանկարծ հառնում է նաև այնպիսի միտք, թե «ազգութենեն վեր կա, կըսեր, ուրիշ բան մը»²⁹... Ո՞րն է այդ ուրիշը. գուցե մարդ-մարդ հարաբերություններ, առաջին հայացքից ճղճիմ թվացող ամենօրյա հոգսերը: Դա մի-

²⁰ Նույն տեղում, էջ 292:

²¹ Գ. Ս և ա ն, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր, Երևան, 1980, էջ 107:

²² Շ. Շահնուր, նշվ. աշխ., էջ 296:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում, էջ 298:

²⁶ Նույն տեղում, էջ 298:

²⁷ Նույն տեղում, էջ 299:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում:

գուցե իրոք այդպես է, գուցե իրոք առաջնային է ազգության հարցերից, բայց հիմա դա չէ, որ հուզում է Շահնուրին: Դավաճանություն է կատարվում, և դավաճանողը աստվածներն են, այն հարալեզները, որոնք չկարողացան կենդանացնել մեր Գեղեցիկին և հիմա էլ լքում են ճակատագրական պահերին:

Շահնուրը կռիվ է տալիս ինքն իր հետ, ուզում է գեթ մի պահ հեռանալ, մոռանալ մեծ վիշտը, ազատվել ճնշող ցավերից, որոնց առջև (ու նաև անկարելի գիտակցությունից) նույնանում են մարդիկ իրենց տկար երեվակայությամբ: «... կարենալ կոճակի մը վրա կոխել և մեկ անգամեն կործանել Թուրքիան: Հետո կոխել ուրիշ կոճակի մը վրա և կառուցանել հրաշալի Հայաստան»⁸⁰, վերջապես, արտառոց մի որոշում. «Պետք էր լքել հայրը»⁸¹, Անհրաժեշտ է հեռանալ վատառողջից, ազգայինից, հայից, քանի դեռ հայր իր ազգակիցը չի սիրեր, որքան ատեն, որ հայր իր ազգային փրկությանը մասին այլևս հույս չունի և ատով իսկ ոչինչ կրնե, պետք է հեռանալ հայեն»⁸²: Բայց մի՞թե կարելի է սիրել լքելով, հույսի դռները փակելով, սեփական անտոնց հրաժարվելով և օտարին ապավինելով, որքան էլ որ նա «դեմոկրատ աստված» լինի:

Այս բոլորը կեղծ ուրացումներ են. պարզապես մեծ է հիասթափությունը անլույս իրականությունից: Երիտասարդ հայ գրողը պարզապես ուզում է կյանքին կառչելու «գամեր» հորինել իր համար՝ հույս և սեր, քանի որ ինքն էլ իրապես վատառողջ է և հաճախ է զրույցի բռնվում մահվան հետ: Վերոհիշյալ մեջբերումը ոչ թե հերոսի անդիմության հավաստումն է, ինչպես պնդում են որոշ գրականագետներ, այլ տրամագծորեն հակադիր մի բան՝ պայքար երկփեղկված ես-ի միջև: Իսկ արդյունքը նախապես հայտնի է: Գրողը իրեն պարտադրում է դավաճանել հային, որովհետև «իր ճիշտ մոտեն էր մահու: Եվ ինքն անկե է, որ կխուսափեր բնազդաբար: Կկարծեր տրամաբանությամբ, դատաստաններով, այսինքն, իր արթուն եսովը առաջանալ, մինչդեռ կհառաջանար ամենահասարակ և ամենեն ավելի մարդկային ինքնապաշտպանությամբ մը: Մութովը»⁸³:

Մարդ, որ օր չի անցկացրել առանց տառապելու հայության հարցի շուրջ, այժմ գիտակցաբար ուզում է խեղդել այդ հիվանդությունն դարձած մտածումը, մինչև որ համատարած սերը կողողի բոլորին: Սակայն, միևնույն է, պարտադրանքը նույնությամբ էլ մնում է իբրև իրականություն չդարձող սառը տրամաբանություն. «Ինքն ալ անդրադարձավ այդ բանին, բայց շունեցավ ոչ մեկ հակազդեցություն: Ընդունեցավ իր տկարությունը, իր ուրացումներն ու սուտը»⁸⁴:

Եզրակացությունը մեկն է՝ հայ գրողը չի կարող ուրանալ իր ազգությունը, նույնիսկ, եթե դրա «անհրաժեշտությունը» փաստված լինի բազում հանգամանքներով: Դրանով նա կուրանա ինքն իրեն և կսկսի գործել ուրիշի անունից: Հիմա բոլորովին ուրիշ իրավիճակ է. պարզապես դժվար է, երբ դավաճանում են հարալեզները, և հայի հոգում ամենափոփոցող սերը մի օր խիստ պակասում է: Սերն է մարդուն ապրեցնողը: Առանց սիրո մեռնում են նույնիսկ աստվածները:

80 Նույն տեղում, էջ 302:

81 Նույն տեղում, էջ 304:

82 Նույն տեղում:

83 Նույն տեղում:

84 Նույն տեղում:

ЦИКЛ РАССКАЗОВ «ИЗМЕНА АРАЛЕЗОВ» ШАХАНА ШАХНУРА

А. Р. ДЕМИРЧЯН

Р е з ю м е

Шахан Шахнур—один из выдающихся представителей современной армянской зарубежной литературы. С его именем связано зарождение в армянской прозе течения «отступничества». Особенно интересен в этом плане цикл «Измена аралезов» (1932 г.). Цикл насыщен многозначными символами. Проза писателя многослойна, и эта многослойность характерна для всего цикла в целом. В первых трех рассказах изображена жизнь западных армян в Константинополе. В последующих рассказах описывается жизнь армянской диаспоры. Цикл завершает рассказ «Измена аралезов», звучащий призывом к трезвости перед угрозой ассимиляции. Весьма интересна композиция и концепция рассказов. Взаимоисключающими фрагментами писатель создает иллюзию безысходности положения. Однако отчаяние писателя переходит в протест, и позиция Шахнура становится очевидной: высокое чувство гражданственности не позволяет ему изменить своему признанию.